

ՏԻՐԱՆ ԶՐԱՔԵԱՆ

(Ինտրա)

1875-1921

Ծննդեան 120-ամեակի առիթով

Ես ճանչցայ մէկն՝ որուն աչէն կը ցայտեր
Ամէն վայրկեան հաւատքի կայծ մը կարծես,
Որուն խօսէին կը փչէին խաւարներ,
Որուն հոգին կ'երթար առաջ հոգիէս
Վ. Թէֆեեան

Մեծանուն քանաստեղծ Վահան Թէֆեեանը, ահա, այսպիսի անվերապահ ակնածանքով է նշում, մեծարում Տիրան Զրաքեանին, որ մեզ ծանօթ է Ինտրա գրական անունով, եւ որի ծննդեան 120ամեակը լրանում է այս տարի։ Բարձրահասակ, ոստանիկ մտաւորական, որ իր անձի մէջ զարմանալի դաշնութեամբ համատեղում է տաղանդաւոր գրողին ներհուն մտածողին, նրբագգաց արուեստագէտին եւ քաղաքական մանկավարժին։

Հայ մտաւորականութեան, գրական կազմակերպութիւնների, մամուլի ու հրատարակչութիւնների համար առիթ է մարելու, գոնէ մասամբ, Տիրան Զրաքեանի հանդէպ իրենց պարտքը, որ յայտնի հանգամանքների քերումով ուշացաւ եւ Հայաստանի, եւ սփիւռքի մէջ։ Առիթ է ընթերցող հանրութեանը ներկայացնելու նրա ստեղծագործութիւնները, ամփոփելու այն, ինչ գրուել է նրա մասին, եւ այդ ամէնին աւելացնելու այն, ինչ մեր սերունդը մտածում է նրա ալեկոծ կեանքի, ինքնօրինակ գրականութեան եւ իր շաղկից դուրս եկած եղբրական ճակատագրի մասին։ Աւելի կարճ՝ հայ գրականութեան վերադարձնել Ինտրային եւ ընթացքի մէջ դնել նրա հարուստ ժառանգութիւնը, որ

ազգային գրականութեան անբաժանելի մասն է։

Ինտրան ծնուել է 1875ին քանաստեղծների օրրան, Պոլսոյ գեղատեսիլ Սկիւտար թաղամասում։ Դեռ թաղային դպրոցի աշակերտ՝ նա աչքի է ընկնում քացառիկ մտացիութեամբ, դիտելու-դատելու ինքնօրինակութեամբ եւ առանձնայատուկ հակումներով դէպի քնական գիտութիւնները, նկարչութիւնն ու քանաստեղծութիւնը։ Նրկորդական կրթութիւնն ստանում է յայտնի Պէրպէրեան վարժարանում, որի քացառիկ լուրջ գրական-իմաստասիրական մթնոլորտում ձեւաւորում են Ինտրայի իմացական ընդունակութիւնները։

1891ին, Պէրպէրեան վարժարանն աւարտելուց յետոյ, ընդունում է Պոլսի գեղարուեստից վարժարանի գեղանկարչական բաժինը, բայց ուսումնական տարին դեռ չբոլորած թողնում է այն՝ չհաշտուելով այնտեղ տիրող «պայմանադրական օրէնքներուն եւ անբան» կանոններու հետ։ Զննաչելով իւրատիպ ու կաշկանդում չհանդուրժող արուեստագէտի նրա հոգին, գեղանկարչութեան դասախօսը, իտալացի մի նկարիչ, «փորձում» է «սրբագրել» իր իւղաներկ մի աշխատանքը։ Նրիտասարդ Ինտրան մերժելով մերժում է իր

«Ինֆնուէիւնը եղծող» սրբագրութեան փորձը: Սուր, կրփոտ, անգիշում վէճը դասախօսի հետ պատճառ է դառնում Ինտրայի հեռացման:

Տարբեր երկրներ ու ժողովրդներ, տարբեր քարքեր ու ֆաղափակրթութիւններ տեսնելու, ինչպէս եւ սովորելու ծարաւը տոչորում է նրան: Եւ ահա, 1905ին Ինտրան մեկնում է Փարիզ՝ ուսանելու: Բայց գիտութեանց եւ արուեստների մայրաֆաղափն էլ չի գոհացնում միշտ որոնող ու տեսապէս անհանգիստ նրա միտքը: Շուտով թողնում է ուսումը եւ, մինչեւ Պոլիս վերադառնալը զբաղւում է ծաղրանկարչութեամբ: «Իր ծաղրանկարները կը փնտռուին ու կ'ապահովեն իր օրապահիկը», գրում է Ժամանակակիցներից մէկը:

1898ին Միֆայէլ Կիւռնեանի հրաւերով մեկնում է Եգիպտոս եւ ծանօթանում վաղուց երազած հին եգիպտական ֆաղափակրթութեանը: Այդ մասին հմտութեամբ, սիրով ու փայլով գրած խոհական վերյուշը դառնում է այդ օրերին իսկ մտայղացուած «Ներաշխարհ»ի ուշագրաւ պատկեր- դրուագներից մէկը: Համբորդելու, տեսնելու, իմանալու եւ յատկապէս «Սեւ ծովի խորհուրդին ի մօտոյ հաղորդուելու» դեռ չյագեցած տենչը նրան տանում է յաջորդաբար Սամսոն, Տրապիզոն, Պաֆրա, Կելիպոլու, այնուհետեւ մինչեւ Կիլիկիա, Տաւրոսեան լեռներ եւ այլուր: Այս շրջագայութիւններից ստացած խորունկ տպաւորութիւնները հետագայում դարձան «Ներաշխարհ»ի Սեւ Ծովեան պատկերների խոհա- փիլիսոփայական հոյակապ շարքի առաջինը:

Մինչեւ 1915 Չրաֆեանը պաշտօնավարում է Պոլսի Պեղագեան, Պէրպէրեան եւ կենտրոնական վարժարաններում, դասաւանդելով հայերէն աշխարհաբար, հայ գրականութիւն, հայ հին մատենագրութիւն, հոգեբանութիւն, բնագիտութիւն եւ

յատկապէս բուսաբանութիւն: Ստեղծագործական առաջին լուրջ փորձերը սկսում է 1894ից: 1898-1890ին գրում է «Ներաշխարհը»ը, որ լոյս տեսաւ 1906ին Պոլսում: 1908ին հրատարակում է իր քանաստեղծութիւնների ժողովածուն «Նոնաստան»ը, նոյնպէս Պոլսում: Ժամանակի տարեգրքերում եւ պարբերական մամուլում Ինտրան տպագրել է արժէքաւոր քաղմաթիւ ուսումնասիրութիւններ գրականութեան եւ արուեստի մասին, ուղեգրութիւններ, գրական էջեր, քանաստեղծութիւններ եւ Ալիշանի, Գ. Սրուանձտեանի, Մ. Պէշիկթաշեանի, Պ. Դուրեանի, Զ. Ասատուրի, Ա. Չոպանեանի, Ա. Արփիարեանի եւ այլոց գրական դիմանկարները:

Ինչպէս կեանքում շատ այլ երեւոյթներ, Ինտրան եղեռնը ընկալեց իւրովի, ազգի, գոյնի ու կրօնի նկատումներից վեր, մարդու եւ մարդկութեան քարձր դիրքերից. այն համարեց նախնիք մարդու եւ մարդկութեան հանդէպ: Հայի տանջանքների եւ սպանութեան մէջ տեսաւ-հաստատեց մարդու եւ մարդկութեան տանջանքն ու սպանութիւնը: Դեռ աւելին, նա սպանուողի մահուան մէջ տեսաւ սպանողի մահը, եւ մտածեց նրա հոգու փրկութեան մասին. մտածեց ու էլ դադարեց գրելուց: Անվերադարձ նուիրուեց ատելութեամբ եւ անգիտութեամբ կուրացած-մոլորուած հոգիները քանին կենաց ֆարոգութեամբ լուսաւորել-փրկելու դժուար առաքելութեանը: Նրան վերջնականապէս տիրեց հոգեւոր եղբայրութեան հակումը: Այնուհետեւ Ինտրան, լիւս՝ գրականութիւն, դպրոց ու մամուլ, շարաքական ֆարոգիչ եղբայր է, Աւետարանը միշտ թելի տակ: Մարդկային հոգու քարձունքների եւ խորխորատների անհանգիստ, խիզախ, սրտոն ու սաւառնաթել խաղարկուն ծալեց հզօր թելերը եւ ամփոփուեց ֆարոգչի մեզ ծանօթ խղճալի կերպարի մէջ ...:

1917ին Ինտրան կանչում է գինուորական ծառայութեան, բայց կեանքը ենթարկելով ստոյգ վտանգի, հրաժարում է գէնք վերցնել, պատճառաբանելով, որ այն դէմ է մարդոց միջեւ սիրոյ եւ եղբայրութեան իր հաւատամքին: 1921ին ինքնակամ մեկնում է Քոնիա Թուրքերին Աւետարանը փարոգելու համար: Իշխանութիւնները ձերբակալում են նրան «Կիլիկիոյ մէջ խռովութիւն սերմանելու» ամբաստանութեամբ: Ականատեսները սարսռագոյցիկ մանրամասներով են նկարագրում Քոնիայից Տիգրանակերտ Բաղրի քանապարհին նրա կրած ծանր տառապանքը, որից ուժասպառ՝ վախճանում է՝ վերջին շնչում կրկնելով իր պատգամը. «Մարդի՛կ, եղբայրներ՛, սաստիկ սիրեցէ՛ք զիրար»:

Ինտրան ապրեց եւ գործեց հասարակական, բողոքական, իմացական եւ գեղագիտական հայեացքների բախման խաչմերուկում: 19րդ դարի վերջին եւ 20րդ դարի սկզբի անցման փոթորկոտ ժամանակաշրջանում: Մարդկութիւնը կանգնած էր նոր դարաշրջանի շեմին ուստի եւ բնական էր հաշուեյարդարի սասկոտ տրամադրութիւնը:

Անյոյս ու մռայլ էր հայ ու մանաւանդ արեւմտահայ գրողի ապրած միջավայրը, որից սնւում էին նրա հոգեկան, իմացական եւ ստեղծագործական մղումները: Հասարակական կեանքի «անարդար» կառուցուածքին այստեղ գումարւում էր մարդկութեան պատմութեան մէջ իր նախադէպը չունեցող ազգային ճնշումն ու բռնութիւնը, որի նակատագրական նշանակութիւնը երբեք չի սպառնում կոտորածների, գաղթների, ւեր ու թալանի պատմական փաստերով: Աւեր գործուեց մանաւանդ «Մնացորդաց»ի հոգեկան

աշխարհում: Ախորին, կոտորածներին հմտօրէն գուգակցւող դաժան գրաքննութիւնը իր սաղմի մէջ իսկ խեղդում էր մարդկային հոգու դեռ չարտաբերուած իւրաքանչիւր ճիշտ ստեղծելով ահաբեկման ու սարսափի ամլացնող մթնոլորտ. «Սրտադող երկիւղ մը, հետապնդող վախ մը, զմեզ հալածող սարսափ մը ամէն կողմէն կը պաշարէր մեզի» գրում է ժամանակակիցներից մէկը: «Հալածող» այդ սարսափից ամայանում է Պոլսոյ գրական կեանքը:

Տագնապ-խռովի այս մթնոլորտում են ծնւում Ինտրայի «Ներաշխարհ» ու «Նոնաստան» գրքերը, որոնք անդրադարձնում են եւ ժամանակը իր ամենասուր հակասութիւններով, եւ հեղինակի հոգեկան աշխարհը՝ այդ հակասութիւններից երկփեղկուած, ալեկոծ ու տանջահար:

«Ներաշխարհը» այդ երկփեղկուած եւ ալեկոծ հոգու մենախօսութիւնն է կեանքի ու նրա առեղծուածների մասին, տիեզերքի յաւերժութեան եւ մարդու վաղանցիկութեան, Աստծու ու բնութեան, սիրոյ ու հշմարտութեան, իր իղէպների ու որոնումների, իր յոյսերի, հրեւանքների ու հիասթափութիւնների, իր ընդվզումների ու համակերպութիւնների, մարդկային իր տառապանքների մասին: Ինտրան այս ամէնի մասին խօսում-խորհրդածում է գրքի եօթ պատկեր-դրուագներում, որոնք մակընթացութեան վերընթաց ճախրանքներով եւ տեղաւուրութեան խորախոր նահանջումներով յաջորդում են միմեանց: Սակայն դժուար այս ճանապարհով ո՛ւր է գնում Ինտրան եւ ինչի՞ն է ձգտում: Բանական, արդար եւ ներդաշնակ մի աշխարհ, ահա նրա ձգտումը. աշխարհ, ուր բացառուեն զրկանքն ու անարդարութիւնը, բիրտ ուժը, սարսափը, ատելութիւնը: Աշխարհ, ուր մարդուն տրուէր աշխատելու, ստեղծագործելու, իր ներքին

ուժերն ու հնարաւորութիւնները ազատօրէն քացայայտելու հնարաւորութիւն. ուր կենսապայփարը, որ «մարդկութեան մեծագոյն չարիքն ու ամօքն է», սահմանափակուելով «մարդուն եւ տիեզերքին կոյր երեւոյթներուն միջեւ»:

Բայց, իրականում, Ինտրայի ապրած աշխարհը Օսմանեան Թուրքիայի 1890-ական թուականների իրականութիւնն էր, որի ներքին ծախքը, թեւեւ անուղղակիօրէն, սակայն էջ առ էջ քացւում են նրա ցաւագին խորհրդածութիւններում. «... Ամենուրեք տեսածս է գոճութիւն. թշուառութիւն. ատելութեան փակ կգականքը. իրական, գոտ, առանց երկինքի, ժպիտի անկարող, ժպիտը ուրացող փոս ու պիրկ այտերու ատելութիւնը»: Ահա, այս բիրտ իրականութեան եւ երագած իդէալական կեանքի խոր հակասութիւններից էլ սկիզբ է առնում Ինտրայի հոգեկան դրաման: Հասարակութիւններից մեկուսանալու կրֆոտ ցանկութիւնը, մահուան կրկնուող տենչը, մեծ եսին հետ ձուլուելու միստիկ տրամադրութիւնը, նրա բոլոր ուրացումներն ու ծայրայեղութիւնները հակադարձ արտայայտութիւններն են աշխարհի, կեանք ու մարդու նկատմամբ խորագոյնս իմաստաւորութեամբ եւ նրբագոյնս զգացումով ամենաբուռն սիրոյ ու կարօտի:

Եւ ամէն անգամ, երբ բնեւորվ կեանքը, աշխարհը, բնութիւնն ու տիեզերքը, անցաւորն ու յաւերժը, ծնում են նոր կասկածներ, նոր հիասթափութիւններ՝ մթագնեւորվ ներքին լաւատեսութիւնը, Ինտրան նորից դիմում է կեանքի, բնութեան ու երջանկութեան խորհրդանիշ Իոնեային՝ իր սիրոյն. «Եղիւր, իմ ցաւագին գոյութեան մէջ քու գոյութեան ժպիտն իբրեւ անդրաշխարհային յոյս մը հոսելու. գոյութեանդ հեռադու դաշնութիւնը հեղելու իմ բուրի լուծութեանս խոռոչներուն, իմ տառապանքի բաւիղներուն մէջ ... եղիւր, եկուր գիս արթնութեանց առաքինութեամբ

նորաստեղծելու, ներշնչումս, երագս, իմացութիւնս, ո՛վ իմ մեղաւադիկ փառքս ...»:

Այս վերջին ցնծագին փառքանութիւնը՝ սիրոյ, որով աւարտում է Ինտրայի մեծախօսութիւնը՝ «Իմ ճշմարիտ, ճշմարիտ երանութիւնը նայէ, տիեզերքին ներկայութիւնն է ... Թող անհուն թափանցիկ գիշերը մեր առագաստն ու խորանը ըլլայ. մեր ամբողջ գրկախառնումը Թող պակուցեալ աղօթքն ըլլայ առ Աստուած»:

Աւարտուեց Ինտրայի մեծ մեծախօսութիւնը եւ սակայն արդար, ներդաշնակ աշխարհի նրա երագը մնաց երագային հեռուներում: Ինտրան դառնօրէն գիտակցեց այս՝ եւ միայնակ հերոսի իր անորոշութիւնից ընկրկեց: Նրա մէջ հետգիտէ խորացաւ, տիրապետեց «աշխարհային չնչին, գոճ» շահագրգռութիւններից վեր՝ «գաղափարաց անթարշամ» կեանքով ապրելու եւ հուսկ ուրեմն՝ «տիեզերական մեծ ամբողջին» հետ ձուլուել-նոյնանալու միստիկ տրամադրութիւնը:

«Ո՛հ, գար այսպէս մեծ գիշերն ալ երանաւէտ,

գաղափարաց անթարշամ կեանքն ինձ շնորհելու»:

«Նոճաստան»ը այս տրամադրութիւնների ցայտուն արտայայտութիւնը եւ Ինտրայի կարապի երգը եղաւ:

Ինտրայի գրական խօսքը խիստ ուշագրաւ երեւոյթ է իր ոճական իւրայատկութիւններով՝ հզօր երեւակայութիւն, արտասովոր անկեղծութիւն, վսեմութիւն, թափ ու փափկութիւն, ճախրանք ու խորասուզում, զգայական ու խոհական յագեցուածութիւն, տիեզերական կապակցութիւնների ընկալում, որ պայմանաւորում են թարմ, իւրօրինակ ու շփեղ

պատկերների, համեմատութիւնների, փոխաբերութիւնների, թեւաւոր արտայայտութիւնների եւ ոգեկոչումների անսպառ կուտակումներով, որոնք եթէ երբեմն «յոգնեցնում են», բայց եւ վարձատրում են գեղագիտական հագուագիւտ վայելիքով:

Ու եթէ այսօր, իր ծննդեան 120 ամեակի օրերին էլ, հայ ընթերցասէր հասարակութեան հիմնական մասի համար Ինտրան դեռ մնում է մեծ անծանօթը, մեղաւորը 80 տարիներ հայութեանը

պարտադրուած պայմաններն էին: Այժմ, սակայն, փոխուած ժամանակին ու հանգամանքներում, եւ անկախ պետականութեան պայմաններում գործող գրական կազմակերպութիւնների ու մտաւորականութեան պարտքն է Ինտրային ու իր ժառանգութեան վերադարձը ապահովել իր տիրոջը՝ հայ ժողովրդին ու հայ գրականութեանը:

ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈԻՋԵԱՆ

ԻՆՏՐԱՅԻ ՔԵՐԹՈՂՈՒԹԻՒՆԸ

«Նոնաստան»ի մասին մանկավարժ-հայագէտ Ագատ Եսփուշեանի վերլուծական այս էջը, գրուած է իբրեւ նախարան «Անմահ քերթողներու» շարքի (Հալէպ, 1945) Ինտրային նուիրուած 4րդ պրակի:

Կը ցանկանայինք, որ Ինտրայի գրականութիւնը այսօր եւս կարդացուէր, ընկալուէր ի խորոց, ինչպէս կարդացել-ընկալել է սոյն գողտրիկ վերլուծութեան հեղինակը սրանից ուղիղ կէս դար առաջ:

Ինտրան մեծ խորհրդանկարիչ մըն է:

Վարուժանի պայծառ ու լայն նկարներուն, Մեծարեցիի գունագեղ ու փնուշ նկարներուն փոխառն է դնել Ինտրայի լուրք ու հանդիսաւոր նկարները: Զրաքեան համեստ նոնաստանէ մը կը քցած է քաղել 45 հնչեակներ, որոնցմէ իւրաքանչիւրը ուրոյն նկար մըն է լոյսի եւ ստուերի քաջխման տեսակէտէն:

Կրօնական խստաբեր քարոյական մը կը տիրապետէ Ինտրայի քերթողութեան: Հարկ է այդ կրօնական արտաքինէն անդին անցնիլ հասնելու համար, քանաստեղծ Ինտրային, որ տիեզերական ճշմարտու-

թիւններ, թրթռումներ ու ալիքներ ընդունելու համար ունի՝ կրօնական պատգամներէն եւ նուրբ գիտութիւններէն աւելի թափանցող միջոց մը: Այդ իր թրթռուն հոգին է:

«Նոնաստան»ի քանաստեղծութիւններուն արտաքին ներդաշնակութեան պակասը կը բացատրուի նախընտրութեամբ, որ ան կու տայ քերթուածի մը ներքին ներդաշնակութեան: Վ. Թէքեանի առարկան աշխարհն ու մարդն են: Մինչ Ինտրա կը խորանայ կեանքէն անդին, տիեզերքին հոգիին մէջ: Թէքեանի համար կեանքը նպատակ մըն է: Մինչ Ինտրայի համար կեանքը շրջան մըն է, որ պարտի տեղի տալ յաւերժութեան առջեւ:

Ինտրան իր քերթուածներուն մէջ կեցած է կեանքի ու մահուան միջեւ: Կը զգանք Զրաքեանի մեռնելու քուտն փափաքը: Կամ, աւելի ճիշտը, թանձրացեալ այս կեանքէն դէպի յաւիտեանական կեանք մը անցնելու փափաքը: Բանաստեղծը կենդանութեանը արդէն հասած է քաղձացուած այդ կեանքին: Ապացոյց՝ որ անդրդուելի մնաց Գոնիայի պատերազմական ատեանի մահուան սպառնալիքի առջեւ:

ԱԶԱՏ ԵԱՓՈԻՋԵԱՆ

«Փարոս»